

2073  
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ



Ա Յ Ց

# ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ՀԱՅ ՏՈՒՐԻԱՅԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ)



«Այլ բարատարը ստոք, այլ ճշմարտություն  
գիշեր իրացն անկող ոչ լուսեցեց: Այլ ի կարծ ընդու-  
տուցեալ, և ոչ ըլլաք զարժուցեալ, այլ ես ինքնին  
անձամբ անպէտ ի տեղւոյն պատուէցեի և տեօի և  
լուսայ...»

ԵՐՆԵՆ:

Петеръ Артемъ

ЛАЗАРОВЪ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Ա. Դ. ՌՕՏ. ՆԱԿ.

1890

Петеръ Артемъ

ЛАЗАРОВЪ



СВЯТЫЙ СЛАВЯНО-ГРАММАТИЧЕСКИЙ УЧИЛИЩЕ

СВЯТЫЙ СЛАВЯНО-ГРАММАТИЧЕСКИЙ УЧИЛИЩЕ

Дозволено ценз. Тифлисъ, 12-го Марта 190 г.

Тифлисъ, 12-го Марта 190 г. Год ... д. № 41.



(Училищный Устав швейцарский)

Тифлисъ  
ЛАЗАРОВЪ



Тифлисъ  
ЛАЗАРОВЪ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Վաղուց է որ ես փափագում էի ճանապարհորդել թիւրքաց Հայաստանում, որի մասին առհասարակ իրականացես շատ քիչ գիտենք և միայն ժամանակ առ ժամանակ կցկտուր, տիրալի լուրեր ենք ստանում: Այս ուղում էի «անձամբ անդէն ի տեղւոջն» տեսնել թիւրքահայաստանցու վիճակը. «գի ալ է գոր լսէ մարդ, և ալ է գոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք», եթէ խօսելու լինինք Յղիշէի լեզուով:

Ձանազան պատճառներով, որոնց թւելը այստեղ աւելորդ է, ես չէի կարող 1888 թւի սեպտեմբերի 25-ից առաջ սկսել իմ ճանապարհորդութիւնը: Իմ դիտաւորութիւնը գլուխ բերելիս ինձ հանգամանքները չէին նպաստում. ես չը կարողացայ ոչ մի ուղեկից գտնել և առհասարակ ինձ չը լաջողուեց զիւրացուցիչ միջոցներ ձեռք բերել:

Ես մտադիր էի ամբողջ մի տարի անցկացնել թիւրքաց Հայաստանում, պտտելով հետեւեալ մեր հին աշխարհներում՝ Բարձր Հայք, Տուրուքերան, Վասպուրական, որոնք Ալրարատի և Սիւնիքի հետ կառմում են և այժմ, չը նաչած բազմաթիւ եկուտը ազգերի մուտքին, հալութեան սիրտը, կենդրոնը: Յուրուքերան և Վասպուրական, նախնի ժամանակներում, չը ջապատուին Վանալ ծովը և Բարձր Հայքի հետ միասին առաջնութեամբ են երեք ընդարձակ վիլայէթներ (նահանգներ)՝ Էրզրումի, Բաղէշի և Վանալ: Այդ վիլայէթները միայն մօտաւորապէս պահ-

պանել են հայոց վերուիշեալ նախնի նահանգների սահմանները, ապինքն՝ Բարձր Հայք մտաւորապէս ալժմ էրդրումի վիլայէթն է, Տուրուբերան՝ Բաղէշի (Մշու), Վասպուրական՝ Վանալ: Բայց ինչպէս չեսոյ կը տեսնէք, ինձ չը չաջողուեց բոլոր այդ վիլայէթներում պտտել:

Յիշողութիւններս գրելիս դուրս չը ձգեցի իմ ճանապարհորդութեան աչն մասը, որը վերաբերում է մինչև սահմանագլուխը՝ ուսաց Հալաստանով անցած տեղերին, որովհետև այդ տեղերը (դիւաւորապէս Վարսի նոր նուաճած երկիրը) հետաքրքրական են, իբրև նոր ուսաց ձևքն անցած թիւրքաց Հալաստանի մի մասը. դա մի, աջպէս ասած, նախածանօթութիւն է Տաճկաստանի հետ: Ստիպուած եմ մի քանի մանրամասնութիւններ թողնել. սակաչն ոչինչ մխիթարական ե՛ աչ թողածներում: Աւերտը չէր լինի իմ կողմից, ի վերջոյ, նկատել որ ոչ մի չափազանցութիւն կամ փաստերի տենդենցիօզ լուսաւորութիւն ես ինձ թող չեմ տուել պատմելիս:

Եթէ այս փոքրիկ գրուածքը պարզէ փոքր ի շատ էրնթերցողներին մի քանի ինդիրներ, չարժէ նոցա հետաքրքրութիւնը թիւրքաց Հալաստանով և զրդէ ուրիշներին աւելի չաջող և երկար ուղևորութիւն անելու աչ երկրում և ուսումնասիրելու նրան—դա կը լինի մի ամենամեծ վարձատրութիւն իմ աշխատութեան:

Լ. Ս.

# ԱՅՑ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(նայ տուրիստի յիշողութիւններէց)

«Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարին... սակայն և ոչ լսել կամ իմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ աստուցուք փոքր ի շատէ, զի ձայնակէցք լիցուք այնոցիկ... զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արատաւա կեղուցուս ի վերայ ազգին թշուառութեան»:

Ե՛ՂԻՇԷ:

Оглянись — зло вокругъ черезчуръ ужъ гнететъ,

Ночь вокругъ черезчуръ ужъ темна!

Надсонъ.

## I.

### Մ Ի Ն Չ Ե Ի Ս Ա Հ Մ Ա Ն Ը

1888 թւի յունիսի վերջերին հասայ Մօսկուայից իմ ծննդավայրը՝ Գողթան գաւառի (այժմ Օրդուբաթեան բաժին) գիւղերից մինը: Սեպտեմբերի 25-ին այդ տեղից ես ուղևորուեցի Երևան:

Ճանապարհը մինչև Նախիջևան ընկած է նախ՝ ամալի ձորերով, որոնք շրջապատուած են կամ լերկ ժայռոտ սարերով կամ աւաղածածկ բլուրներով, և յետոյ՝ անապատ դաշտերով, որոնց վրայ օաղիսի պէս

ցրուած են կանաչազարդ գիւղեր: Չրի պակասու-  
թիւնից մեծ տարածութիւններ կորչում են բոլորո-  
վին ապարդիւն: Երևանին մօտենալիս բնութիւնը  
աւելի զուարթ կերպարանք է ստանում շնորհիւ մար-  
գագեաթիւնների, հիանալի մշակուած հողերի, խիս  
ցրուած, ծառաշատ և այգիներով պատած գիւղերի,  
արուեստական անտառիկների և այլն: Այս բոլորը  
տեսնելիս հեշտ է համոզուել, թէ ինչ հրաշքներ  
կարող է անել հայ աշխատասէր շինականը, եթէ ու-  
նենայ խաղաղութիւն, ապահովութիւն, ոռոգելու հա-  
մար ջուր և այլ յաջող պայմաններ: Անվերջ պատե-  
րագիմների և արշաւանքների ժամանակ թուրքերը  
խլել են հայերից ամենալաւ հողերը դաշտային տե-  
ղերում: Թուրք բէգերը և խաները այժմ էլ ահագին  
կալուածների տէրեր են: Շարուր-Նարալագեագի հիա-  
նալի դաշտը գլխաւորապէս բռնուած է թուրքերով,  
որոնք չը նայած բոլոր յաջող պայմաններին և մի  
յայտնի տենդենցիական յարաբերութեան դէպի ի-  
րանց՝ այնուամենայնիւ հայերից ընդհանրապէս ստոր  
են տնտեսական կողմից և մանաւանդ մտաւոր զար-  
գացումով:

Հին-Նախիջևանից մինչև Երևան կարգին ճա-  
նապարհ չը կայ: Մի քանի տարի է որ փորձ են  
անում խճուղի շինելու: Ճանապարհին իմ ուշադրու-  
թիւնս գրաւեցին հայ ու թուրք գիւղացիների խըմ-  
բերը, որոնք կէսօրուայ արեգակի կիզիչ ճառագայթ-  
ների տակ, թանձր թողի մէջ կորած, երես ու ճա-  
կատից առուի նման քրտինք թափելով, մի քանի

եասառւնների հսկողութեան տակ, աշխատում էին խնուղու վրայ:

Սեպտեմբերի 29-ին գիշերը հասայ Երևան, ուր բաւական ձանձրալի օրեր պիտի անցկացնէի, մինչև որ անցաթուղթ ստանալի Տաճկաստան գնալու: Այդ ժամանակամիջոցում ես տեսայ «Սարդարի պալատը», որը պահպանւում է իբրև մի պատմական հնութիւն ժամանակի կորուստից: Բաւական է այս թուրքերի կարծիքով («հրաշալի պալատը») տեսնել՝ հասկացողութիւն կազմելու համար պարսկական անձո՞ւնի, ողորմելի ճաշակի մասին: Գլխաւոր դահլիճի պատերը և առաստաղը ծածկուած են հացելիների փոքրիկ եռանկիւնի կտորներով և անձո՞ւնի ծաղիկների նկարներով ու մի քանի խաների պատկերներով: Մի պատուհան, գոյնզգոյն ապակիներից կազմած, նայում է դէպի քարափի (որի գլխին պալատն է) ստորոտում գոռոզ Զանգուն և գետի միւս ափին գտնուող «Սարդարի բաղը»: Բացի այդ գլխաւոր սենեակից կան մի քանի փոքրիկ, ցած, գաճած, ողորմելի սենեակներ էլ, որոնք աւելի պահարանների են նման, քան թէ մի Սարդարի պալատի սենեակներին:

Հոկտեմբերի 8-ին ես ստացայ անցաթուղթը և միւս օրը, առաւօտեան, կառքով ուղևորուեցի Էջմիածին, մի վաղարշապատցու հետ միասին: Մենք անցնում էինք մի քանի գիւղերով և ամալի դաշտերով, որոնց մեծ մասը վանքի կալուածներ են: Ճանապարհի աջ կողմում ինձ հետաքրքրեց մի երկար տարածութեան վրայ ձգուող ջրանցք (կանալ): Բա-

նից դուրս եկաւ, որ այդ ջրանցքը երբէք գործածութեան մէջ չի եղել, այլ նախկին կաթուղիկոսներից մինը բաւականին գումար մսխելով՝ կամեցել է այդ ջրանցքով ջուր հասցնել ուղղելու վանքապատկան այն մեծ տարածութիւնները, որոնք, ջրագուրկ լինելով, բոլորովին ամայի ու ապարդիւն են կորչում: Գովելի՝ գործ. սակայն, ինչպէս առհասարակ սովորական է մեզանում, նախ քան այդ ձեռնարկութեան իրագործումը, չէ ուսումնասիրում կանխապէս հարցը հմուտ և տեղեակ մասնագէտներից, այլ ինչպէս իրանց խելքն է կտրում, այնպէս էլ կարգադրում են ջրանցքի փորելը: Եւ ահա, ահագին ծախսեր անելուց ու գործը վերջացնելուց յետոյ, համոզւում են, որ ջրանցքը ջուր չէ հասցնում տեղը, անպէտք է: Ժողովրդի կոպէկները ապարդիւն մսխելուց վերջը, ձեռք են քաշում գործից, թողնելով միայն անհեռատես գործի տխուր յիշատակը, լուռ վկան՝ ահա՛ այդ անպէտք ջրանցքը...

Հեռուից, հսկայ Մասիսի և Արագածի ստորոտներում փռուած դաշտում, դալար այգիների և ծառերի կանաչ սաղարթների միջից երևացին վանքի գմբէթները: Մի անսպասելի, անսխորթ տպաւորութիւն, մի կատարեալ հիասթափումն տիրեց ինձ, երբ տեսայ զանգակատների և գմբէթների կարմիր ներկած գլուխները և սպիտակեցրած պատերը: Այդ բոլորովին չէր սազումս վանքի պատկառելի վեհութեան ու պարզութեան... Մեցնելով ս. Հռիփսիմէի և ս. Շողակաթի այժմ խարխուլ, անինամ վանքերի մօտից՝

մտանք էջմիածին: Վաղարշապատի գլխաւոր փողոցի երկու կողմից շարուած են բաւականին գեղեցիկ, կոկիկ, եւրոպական ճաշակով շինած տներ: Հարց ու փորձից իմացայ, որ այդ գեղեցիկ տները զանազան եպիսկոպոսների և վարդապետների ազգականներին են պատկանում և շինուել են, երբ այդ սրբազանները և սուրբ հայրերը, թողնելով իրանց աղքատ ծնողներին ու ազգականներին՝ հրաժարուելով բոլոր աշխարհայինից՝ նուիրել են իրանց ազգին և եկեղեցւոյ ծառայելուն...:

Էջմիածնում ես իջայ իմ ուսանողական ընկերներիցս մէկի մօտ: Մեծ էր զարմանքս և ուրախութիւնս, երբ մէկի տեղ երեքին պատահեցի: Բոլորն էլ նոյն սարի հրաւիրուած էին ձեմարանը ուսուցչութեան:

Էջմիածնում մի քանի օր մնացի. ծանօթացայ նորա նշանաւոր թէ հնութիւնների և թէ նորութիւնների հետ: Առ հասարակ տխուր տպուորութիւն թողեց իմ վրայ էջմիածինը: Ուր կարծում էի տեսնել փառահեղ հնութիւններ, վեհ, պատկառելի շինութիւններ՝ տեսայ անխնամութիւնից քայքայուած և քայքայուող հին շինութիւնների խարխուլ, փլուող, թշուառ ստուերները: Ուր կարծում էի հայկական գեղարուեստի, ճաշակի նմուշներ տեսնել՝ տեսայ, այն էլ Մայր Աթուռի տաճարում, անզարգացած, անճոռնի, պարսկական ճաշակի ներմուծումը: Բայց այդ դեռ բաւական չէ: Ոչ պակաս տխրութիւն է պատճառում հային, երբ նա տեսնում է վանքի կալուածների ան-

խնամ դրութիւնը: Եթէ կալուածների անտեսական վիճակը յանձնուէր մի քանի զիւղատնտեսներից կազմած վանքա-եկեղեցապատկան կալուածների վարչութեան, որը լինէր մեր հոգևոր կառավարութեան մի առանձին ճիւղը, կարելի կը լինէր կարգ ու կանոն մտցնելով և խելացի մշակութեամբ մի քանի տասնեակ անգամ աւելացնել այժմեան չնչին եկամուտները և ազատուել այն անիշխանութիւնից, որի շնորհիւ միայն զանազան ծակ ջէբեր են լցւում: Կանոնաւոր անտեսական կառավարութիւնը ոչ միայն կը ծածկէր այդ ճիւղի՝ «վանքա-եկեղեցապատկան կալուածների վարչութեան» ծախսերը, այլ և մի քանի տասնեակ անգամ կ'աւելացնէր եկամուտները: Հիմա այդ կալուածները կամ ամենաչնչին կապալադրամներով են տրուած մասնաւոր անձերի կամ նոցա հսկողութիւնը սուրբ հայրերի ձեռքում է, որոնք ի հարկէ ոչինչ հասկացողութիւն չ'ունին զիւղատնտեսութեան մասին: Աւերոյիշեալ բարենորոգութիւնը մտցնելուց յետոյ մեր սուրբ հայրերին և սրբազաններին, հաւատացէք, առանց անտեսական զբաղմունքների էլ, բաւական գործ է մնում.— բուն վանքերի կառավարութիւնը, շրջակայ հայ ժողովրդի հովութիւնը, աղքատ ու որբ շինական մանուկների համար վանքերում դպրոցներ պահելը և, մի խօսքով, իրանց բարձր բարոյական կոչման պատշաճ գործունէութիւնը:

Փորձեր, ասում են, եղել են Եջմիածնի կալուածների համար զիւղատնտեսներ բերելու, բայց

դորքա ամեն բան ուղեցել են զլիւիցը սկսել. իսկոյն  
և եթ սահագին անողուտ ծախսերի մէջ են գցել  
վանքը, նոր մեքենաներ և գործիքներ բերել տալով,  
որ մի քանի փորձերից յետոյ, դէն գցեն նոցա մի որ  
և է անկիւն, առանց այլ ևս չիշելու նոցա մասին,  
իրանք էլ ընկղմուեն նախորդների անգործութեան  
ու թերութեան մէջ: Այդ տեսնելով, հոգևոր իշխա-  
նութիւնը ձեռք է վերցրել զիւզատնտեսներից: Բայց,  
համարձակուամ ենք կարծելու, որ այդ անյաջող փոր-  
ձերը դեռ ոչինչ չեն ապացուցում: Նախ և առաջ  
պէտք է մի քանի ձեռնհաս անձերից յանձնաժողով  
կազմուի, որը ուսումնասիրէ գործի էութիւնը, պարզէ  
կալուածների ներկայ թշուառ վիճակը և յետոյ, ու-  
սումնասիրութեան հիման վրայ, կարելի կը լինի իմա-  
նալ այն միջոցները, որոնք հարկաւոր են ազատելու  
մեր վանքա-եկեղեցական կալուածները նոցա ներկայ  
ընկած, անմխիթար վիճակից:

Ես տեսայ Աղաբաշապատում ներսէսի հռչակա-  
ւոր անստառ ու լիճը: Նոր սերունդը, ինքը չը կա-  
րողանալով մի նոր բան ստեղծել, գոնէ եղածն էլ է  
պահպանէր. բայց անստառ այժմ մասնուած է կա-  
տարեալ անխնամութեան: Այցելեցի նոյնպէս և թան-  
գարանը, ուր բացի եկեղեցական հաղուսաններից և  
մի քանի դրամներից՝ ոչինչ, կամ համարեա՛ ոչինչ  
պատմական հնութիւններ չը գտայ: Տեսայ և Գէոր-  
գեան ձեմարանը, միակ մխիթարական հաստատու-  
թիւնը էջմիածնում: Յոյս կայ, որ ներկայ ուսուց-  
չական խմբի և կանոնաւոր վարչութեան շնորհիւ,

նա լիովին իրականացնէ այն մեծ յոյսերը, որ ունի ազգը նորա վրայ: Յանկալի է միայն, որ ուսումն ու կրթութիւնը այնտեղ աւելի որոշ և ժամանակակից պահանջներին աւելի համեմատ ուղղութիւն ունենար. «առնուցուք զգիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ», ասում է վարդապետի իրէպրական տիպարը՝ Նղիշէն: Անուրանալի է, որ մեզանում զարգացած ու լուսաւոր խելքի տէր վարդապետների մի կատարեալ սով է. բայց ինչ անել գուցէ նախ պէտք է մտցնել անիշխանութեան և կամայականութեան մասնուած վանականների կեանքի մէջ օրինաւոր կարգ ու կանոն, և յետոյ բարձրացնել վարդապետացուների մտաւոր զարգացման աստիճանը, այնպէս որ նոքա հասակատասխանէին «վարդապետ» բառի բուն նշանակութեան: Մեր ամենամեծ թշնամին՝ ագիտութիւնն է, խաւար ու նեղ հասկացողութիւնը իրերի մասին:

Մի քանիսները կարծում են, որ բաւական է ձեմարանից նոր աւարտած աշակերտներին վարդապետ ձեռնադրել և ահա մենք կ'ունենանք կարգին վարդապետների մի խումբ. դորա համար պէտք է միայն նորաւարտ, բոլորովին անփորձ և խակ աշխարհացողութիւն ու զարգացում ունեցող 20—22 տարեկան երիտասարդներին խուցեր մտցնել, վանքերում փակել: Ի հարկէ, մի չաչոնի չափով, այդ հոսանքը գուցէ օգտակար լինի, բայց նորա ազդեցութիւնը հազիւ թէ մեծ լինի. այդ զարգացման աստիճանով նոր վարդապետները անխարող կը լինին իրերի և հան-

գամանքների խորքը [Թափանցել և ինչպէս հարկն է կառավարել (չէ որ նորա են մեր երարխիայի պաշտօնեաները), հոյուել իրանց ազգը: Բացի այդ, վարդապետը կեանքի մէջ իւր ե ս ի համար վայելու [Թիւններ չը փնտռող մի անձն է, որը, հրաժարուելով բոլոր աշխարհային զուարճութիւններից, բոլոր եսական հոգներից ու շահերից՝ նուիրում է իրան միայն գաղափարի ծառայելուն, ունենալով կամ ասկետական (անապատական) իդէալ, կամ Ժողովրդի համար գործելու, գոհուելու նպատակ. Ժողովուրդը նորա ընտանիքն է, Ժողովրդի շահերը նորա անձնական շահերն են: Բաց ինչպէս կարող են աշխարհային, նեղ անձնական ձգտումներից ու վայելու [Թիւններից հրաժարուել դեռ բոլորովին կեանքին անծանօթ, անփորձ, վայելու [Թիւններին կարօտ 20—22 տարեկան աշակերտական նստարանները դեռ նոր [Թողած պատանիները: Քոյ նախ և առջ գոքա վարժապետներ և քահանաներ դառնան, ցրուեն զիւղերում ու քաղաքներում, ուսուցանեն, շփուեն Ժողովրդի հետ, ծանօթանան կեանքի հետ, գործեն և յետոյ իրանց հասունացած, փորձուած խելքով և երբ այլ ևս իրանց անձնական շահերը, կրքերը չեն կապում նոցա աշխարհի հետ, այլ լոկ գաղափարի համար են ուզում գործել՝ հեռանան աշխարհային հոգներից, վարդապետներ ձեռնադրուեն և նուիրուեն ազնիւ սրտով, բոլոր եռանդով, աւանց շահամոլական և սնտփառական ձգտումների իրանց ընտրած նպատակին՝ գործել յօղուտ ազգի և եկեղեցւոյ:

Բայց ժողովրդին օգտակար լինելու համար պէտք է փարժապետը և քահանան զարգացած մարդիկ լինին, ընդհանուր, լայն զարգացման տէր մարդիկ:

Բոլորովին ուրիշ խնդիր է նոցա նիւթական գրութիւնը բարելաւելը:

Իսկ լայն զարգացումին, բացի ընդհանուր պատմութիւնից և գրականութիւնից, մեծապէս նպաստում են և բնական գիտութիւնները: Մինչդեռ վերջին ժամանակներս ձգտում է նշմարում կրճատել ընդհանուր զարգացուցիչ առարկաները, նա մանաւանդ բնական գիտութիւնները և տալ ճեմարանցիներին նեղ, սոսկ աբեղայական կրթութիւն և ուսում, երբ պէտք էր մինչև անգամ մի քանի նոր առարկաներ էլ մտցնել: Վարժապետը և քահանան ժողովրդի մտաւոր խաւարում բացի վառ ճրագներ լինելուց, որ փարատեն ագիտութիւնը, սփռեն համերաշխութիւն, լոյս և բարոյականութիւն՝ պէտք է նաև տգէտ ու աղքատ ժողովրդի, գիւղացու օգնող-խորհրդատուները լինէին: Առողջապահական ու գիւղատնտեսական օգտակար տեղեկութիւնները, խորհուրդներն սւմից կարող է լսել շինականը, եթէ ոչ իւր փարժապետից կամ քահանայից, իսկ դորա համար այդ վերջինները պէտք է իրանք ունենան այդ գիտութիւններից տեղեկութիւններ. իսկ այդ գիտութիւնների հիմունքները հաստատուած են բնական գիտութիւնների անյողգողը, հզօր, մարդկանց յառաջագիւժութիւն ու յաղթութիւն տուող ճշմարտութիւնների վրայ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ

առողջապահութիւնը դեռ ևս բժշկականութիւն չէ: Առողջապահութիւնը, որի նպատակն է ցոյց տալ առողջութիւնը պահպանելու միջոցները, անհրաժեշտ է ամեն մարդու համար նոյն չափով, որքան դրել ու կարողալը. իսկ բժշկականութիւնը (նեղ մտքով թերապիան) ցոյց է տալիս միջոցները՝ վերականգնեցնելու, բժշկելու խանգարուած, կանոնաւոր (նորմալ) դրութիւնից շեղուած առողջութիւնը, և դա արդէն բժիշկների մասնագիտութիւնն է:

\* \* \*

Հոկտեմբերի 22-ն էր. մի պարզ, գեղեցիկ աշնանային առաւօտ: Ընկերոջս տան մօտ կանգնած էին երկու գիւղացի իրանց քնձոտ սպիտակ-մոխրագոյն ձիերով. գիւղացիներից մինը հայ էր, միւսը թուրք: Դոքա պէտք է ինձ հասցնէին Ալէքսանդրօպօլ: Գնալ էջմիածնից ուղղակի Վան՝ Իզդիր-Բայազէդով, առանց քարւանի կամ գինուած խմբի, փորձուած մարդկանց կարծիքով, շատ վտանգաւոր է, որովհետեւ պէտք է անցնել Աբաղայի դաշտով, որը գտնոււմ է պարսկատաճկական սահմանի վրայ և բռնուած է աւազակաբարոյ քրդերի հրոսակներով: Սա միայնակ էի, ուստի մնում էր գնալ Ալէքսանդրօպօլ և Կարս և, եթէ այնտեղ ընկեր պատահի Թիւրքիա գնալ՝ կամ Ալաշկերտով անցնել Վան կամ ուղղակի գնալ նախ Կարին: Տալով իմ մնաք բարեաւս էջմիածնի բարեկամներին և առնելով նոցա բարեմաղթութիւնները, ես հեծայ թուրքի ձին, որը աւելի աշխոյժ էր երեւում:

իսկ իմ փոքրիկ բեռս՝ մի փոքրիկ չեմօզան և մի փոքրիկ խուրճին՝ բարձեցին հայ գիւղացու ձիու վրայ: Այդ երկու անգէն ձիապանների հետ ես ճանապարհ ընկայ դեպի Ալէքսանդրօպօլ: Ուղեցոյցներս ընտրել էին Արագածի հարաւ-արեւմտեան լանջով՝ Մաստարայի մօտից անցնող ճանապարհը, որը, նոցա ասելով, թէև դժուար ու երկիւղալի, բայց աւելի մօտ էր: Ես ունէի հետս միայն երկու բեզովքեր:

Ճանապարհի երկու կողմին, արտերում, գիւղացի կանայք ու աղջիկներ բամբակ էին հաւաքում: Մի քանի տեղ հայ շինականները իրանց նահապետական ամենապարզ կազմութիւն ունեցող արօրով, լծած եզներ ու զոմէշներ՝ երկիրն էին մշակում, արտաշայտելով իրանց զգացմունքները թուրքերէն երգերով: Մենք անցնում էինք հայ, թուրք կամ խառն ազգաբնակչութիւն ունեցող աղքատիկ գիւղերով: Քանի հեռանում էինք Վաղարշապատից, այնքան բնութիւնը ամալի կերպարանք էր ստանում. ծառեր և այգիներ այլ ևս չէին պատահում, գիւղերի տեսքը աւելի թշուառ էր դառնում:

Ինչպէս շինութիւնների նիւթը, նոյնպէս և տեղափոխելու միջոցները Հայաստանի զանազան կողմերում տարբեր են և կախուած տեղային, բնական պայմաններից: Ուր որ սարերը մօտ են, քար շատ կայ՝ տները շինուած են անտաշ քարերից ու կաւից կամ կրախառն ցեխից, ամենաանճոռնի, ողորմելի ձևով. ուր քար չը կայ, ինչպէս, օրինակ, Հին-Նախիջևանի ու Շարուր-Ղարալագեազի դաշտերում՝ ար-

ները, ինչպէս և այգիները պատերը, շինուած են կաւից և հողից: Փայտը առհասարակ շատ քիչ է գործածուած շինութեան համար՝ նորա սակաւութեան պատճառով: Իբրև ծանրութիւններ տեղափոխելու միջոցներ քարքարոտ ու լեռնային տեղերում, օրինակ՝ Վոլթնում, ծառայում են ձին, ջորին ու էշը. սայլեր չը կան: Իսկ Հայաստանի աւելի լեռնադաշտային և տափարակ տեղերում տեղափոխութեան համար գործ են ածում նահապետական սայլերը, լծած գոմէշներով կամ եզներով, կամ թէ ուղղակի հէնց եզներին ու գոմէշներին բեռներով: Քանի հեռանում էք Արարատեան դաշտից դէպի Շիրակ ու Բարձր Հայք, այնքան սակաւ էք պատահում տեղափոխելու և առհասարակ մշակութեան համար ուրիշ անասուններ, քացի եզներից ու գոմէշներից: Սայլերի (արաբա) կազմութիւնը բոլոր կովկասեան ազգերի մէջ միակերպ է: Հետաքրքրական է նկատել այն փոփոխութիւնը, որը սակաւ առ սակաւ մտնում է այդ սայլերի կազմութեան մէջ, ուսաց ազդեցութիւնից: Յանր, մի քանի հաստ տախտակներից միասպաղ շինած ակների տեղ, մեծ քաղաքներին մօտ դիւղերում, սկսում են գործ ածել աւելի թեթեւ, եւրոպական ձևի անիւներ: Բայց դեռ այս նոր տեսակի անիւները անշարժ են ամրացրած սունու ծայրերին, ինչպէս և առաջուայ նահապետական ակները, այնպէս որ սունին է պտուռում ու պտտեցնում իւր հեռանիւները և ոչ թէ սունին անշարժ է մնում, իսկ անիւները պտուռում նորա շուրջը:



Քարքարոտ, հրաբխային հետքերով ծածկած ճանապարհը քանի գնում բարձրանում էր: Արագածի լանջին ցրուած գիւղերը շատ ողորմելի տեսք ունին: Առհասարակ բոլոր շրջակայքը, զուրկ ծառերից, ահագին հրաբխային ժայռերի կտորներով ու քարերով ծածկած սև հողը, ամաչի, խուլ ձորերը, ողորմելի խրճիթների հետ միասին, մի առանձին ակուր արպաւորութիւն են թողնում մարդու վրայ: Ահա ճանապարհի ձախ կողմին, բարձրութեան ստորոտում, երևում են մի հին հայոց եկեղեցու աւերակներ, որոնք լռելեաց պատմում են այժմնորա մօտ գտնուող թրքաց Երինդ գիւղի անցեալը... Այդ փլատակներով ծածկուած է մեր հայրենիքը: Այդ փլատակները անմոռունջ վկաներ են նախնի հայաշատութեան և մեր ազգի բարգաւաճ անդառնալի օրերին: Շատ տեղերում, ուր այժմ ազգաբնակչութիւնը թուրք է, բացի եկեղեցիների, վանքերի ու բերդերի փլատակներից, հողի տակ կարելի է գտնել և հին հնձաններ, որոնք ի հարկէ թուրքերին չէին կարող պտտկանել: Այժմ միայն հնութեան այդ շօշափելի, աչքի ընկնող հետքերը, այլ նաև շատ տեղերի հայկական անունները նոյնպէս պատմում են անցեալի մասին. բաւական է, օրինակի համար, յիշել այստեղ Վանանդ, Դաստակ, Օձօփի (թուրքերի արտասանութեամբ Ուստուփի) այժմ թրքաբնակ գիւղերի հայկական անունները հէնց միայն Գողթնում...

Երեկոյցեան հասանք Արմզլու հայ գիւղը: Այժմ սանդրօպօլի գաւառի և Կարսի կուսակալութեան գիւ-

զերը մի ընդհանուր կերպարանք ունին. բլրանիսս կամ տափարակ տեղերում գետեղուած ծառագուրկ գիւղեր են, որոնց անտաշ քարերից ու ցեխից շինած ողորմելի, որջանման խրճիթները, խոտադէզերը և աթարների բուրգերը (պիրամիդ) տալիս են մի բնորոշ տեսք: Այդ գիւղերի ժողովուրդը շատ սգէտ, բիրտ և աղքատ է: Համարեա բոլորը ուսումնարաններից զուրկ են: Արմզլու գիւղը ունի մի փոքրիկ եկեղեցի և թէպէտ համեմատաբար ունեւոր գիւղերից է, բայց ուսումնարան չ'ունի:

Քուրք ձիապանս յայանեց, որ այդ գիւղում պէտք է գիշերենք: Մենք իջանք մի ունեւոր գիւղացու տան առաջ: Այդ տունը մի քառակուսի ցածր շինութիւն էր, անտաշ քարերի և կաւի մի կուտակումն, լուսամուտներից բոլորովին զուրկ, հողածածկ կառուով: Տանտէրը ներս տարաւ մի նեղ ու մութ «շվաք», բաց արեց մի դուռ շվաքի մէջ և մենք մտանք մի խաւար տեղ. հոտը և անասունների Ֆունչոցը իմացրեց որ գոմումն եմ: Գոմի մի անկիւնը աղօտ լուսաւորուած էր: Գիմեցիկնք այնտեղ. դա, հիւրերի համար շինած բաժանմունքը՝ «օդան» էր: Այդ քառակուսի տարածութիւնը շրջապատող երկու պատերը՝ օդայի մուտքի դէմուդէմը և ձախ կողմինը՝ գոմի ընդհանուր պատերի շարունակութիւնն էին, բայց այդ մասում սրբատաշ քարերից շինած. իսկ միւս երկու պատերը, որոնք բաժանում էին օդան գոմից, ցածր էին և գերաններից ու սիւներից շինած. դռան նման մի անցք տա-

նում էր օղան: Մուտքի դէմնուդէմ գանուող պատում քարերից շինած էր բուխարին: Սրբատաշ քարերի վրայ մի քանի կոպիտ քանդակներ էին երևում: Օղայի մուտքից մինչև բուխարին տանում էր մի նեղ անցք, որի երկու կողմից, օղայի բոլոր երկարութեամբ, գետնից մի փոքր բարձր՝ քարից ու կաւից շինուած էին երկու թախտաձև «սաքու», կոպիտ բրդեայ զբէջաներով: Ճածկած: Առաստաղը գերաններից ու տախտակներից էր, մէջտեղում երեք փոքրիկ ծակ կային, որտեղից լոյս ու թարմ օդ էր մտնում գոմը. բայց այդ փոքրիկ ծակերն էլ ձմրանը ծածկւում են: Մի փոքրիկ նաւթի թիթեղեայ լամպ, առանց ապակու, մխալով աղօտ լուսաւորում էր մութ օղան:

Բաւականին ցուրտ էր: Սա տեղաւորուեցի «սաքուներից» մէկի անկիւնում, բուխարուն մօտ: Երկու տանտէր եղբայրներից մէկը բերաւ աթարների մի քանի աղիւս, դարսեց բուխարում և վառեց, նախ կրակելով «հուսը» (փշոտ փոքրիկ թուփ): Օղան իսկոյն լցուեց գիւղացիներով՝ բոլորը կոշտ, բիրտ, սարըցի հայի առնական դէմքերով տղամարդիկ, գլխներին ահագին փափախներ, հագած ոչխարի մուշտակներ կամ բրդեայ չուխաներ: Շատերը հէնց երևի ինչպէս բանում էին, այնպէս էլ եկել էին, գլխներին մի կեղտոտ թաշկինակ, ծայրերը կապած ծոծրակի կողմից, կապաների թևերը վեր քաշած, կոշտ, ուժեղ ձեռները մերկացրած: Բոլորը նստոտեցին, ով ինչպէս չարմար էր գտնում, սաքուների վրայ, որոնք

նստարանների և մահճակալների տեղ էին: Նոքա ծը-  
խում էին, հետաքրքրութեամբ ինձ ոտքից ցզլուխ  
դիտում, իրար մէջ նկատողութիւններ անում, խօ-  
սում, փնթփնթում...

Ես հետս թէյ ու շաքար էի վերցրել: Ունեոր  
տանտէրերիս մօտ գտնուեց մի «չայդան» և երեք  
բաժակ: Զայդանը լիքը ջրով դրուեց վառուող  
աթարների վրայ և երբ մի քանի ժամանակից յետոյ  
թէյը պատրաստ էր, հերթով բոլորս էլ խմեցինք:  
Այս կողմերի (Ալէք. և Կարսի) գիւղացիները միայն  
բացառիկ դէպքում են թէյ գործածում, և առհասարակ  
այդ տգէտ, աղքատ ժողովուրդը ապրուստի և  
կեանքի շատ սահմանափակ պահանջներ ունի: Ուրիշ  
տեսակ դժուար էլ է սպասել, քանի որ ամբողջ տա-  
րին չարչարուելով և՛ ինքը և՛ իւր անասունները,  
հազիւհազ է գիւղացին մուտք ու ելքի ծայրերը  
իրար հասցնում:

Գիւղացիք շատ էին հետաքրքրում զինուորա-  
կոչութեան կանոններով, որովհետև վիճակահանու-  
թեան ժամանակը մօտենում էր: Ամեն մէկը նոցանից  
մի հարց էր առաջարկում ինձ: Ես, ինչքան որ ինքս  
էի ծանօթ կանոնների հետ, բացատրում էի և վեր-  
ջը նոցա ասացի՝ թէ այդ բոլոր կանոնները թարգ-  
մանուած են հայերէն:

— Աղայ, ո՞վ մեզ համար կարդայ, մեր գիւղում  
կարդացող չը կայ:

— Տէրտէր խօսմ ունիք:

— Է՛հ, մեր տէրտէրը էդպիսի բաներ ի՛նչ գիտայ:

Ահա՛ ձեզ մի կարգին վարժապետի կամ քահանայի բացակայութիւնը: Ահա՛ ձեզ ժողովրդի ամենատարրական ուսումից էլ զուրկ լինելը:

Քէչից յետոյ տան մշակ-ճառան (նօքարը) բերաւ մի լայն տախտակ, որը զրեց կամուրջի ձևով երկու սաքուների ծայրերին և այդ սեղանի վրայ, առանց սիւռոցի, շարեց մի քանի լաւաշ, դրեց երկու աման սառէ ճաշ և մի երկու փայտեայ ներկած գգալ: Ինձ համար բերած էին մի երկու հակիթ և մի առանձին տեսակ պանիր, որը ես կեանքումս առաջին անգամ էի տեսնում. այդ «ճիլ» անունով պանրի տեսակը կազմուած է միմեանց կպած պանրի թելերի բարակ շերտերից և բոլորովին համ չ'ունի. ես չը կարողացայ ուտել: Սեղանին մասնակցում էին երկու տանտէր եղբայրները և իմ ձիապան Մանուկը. թուրք ձիապանը գնացել էր մօտակայ թուրքի գիւղում գիշերելու: Միւս գիւղացիները իրանց տեղերում նստած նայում էին մեզ վրայ և շարունակում իրանց խօսակցութիւնը, որը կամոց կամաց դարձաւ իրանց գիւղական գործերին: Նոքա գանդատում էին հողի մեծ պակասութեան, քրդերի և չօբանքեարների աներեսութիւնների և մանր-մունր պաշտօնեաների հարստահարութիւնների վրայ: Մի առանձին աննպաստ կարծիք էին կազմել գիւղացիք մեր իրաւաբանների, դատաւորների մասին:

Քրդերը, այդ աւազակաբարոյ վայրենի ցեղը, կատարեալ Աստուծոյ պատիժ է խեղճ հայի համար: Քարնան երբ նոքա իրանց հօտերով բարձրանում են

Արագածի արօտատեղերը, կամ այնան վերջերին իջնում են այդ արօտատեղերից՝ մեծամեծ փնասներ են հասցնում հայ գիւղացիներին, փչացնելով նոցա ցանքը, հունձը, արածացնելով նոցա արօտատեղերում, գողութիւններ անելով և այլն: Գիւղացիների գանգատները առհասարակ մնում են առանց հետեւանքի:

— Ինչո՞ւ ինքներդ չէք դիմադրում, հարցրի ես:

— Աղայ, մենք ռաշպար մարդիկ ենք, մեզ ինչ կը սազի գող, աւազակ քրդերի հետ գլուխ դնել. այդ անիրաւները ոչ հունձ ունին, ոչ արտ, ոչ ցանք, ոչ տուն. այսօր իրանց հօտերով այստեղ են, վաղը քչեցին գնացին մի ուրիշ տեղ: Եթէ մենք հակառակենք, դոքա գիշերները կը գան կ'այրեն մեր խոտերի դէզերը, մարագները, կը խլեն մեր տաւարը, մի քարի տակից գնտակահար կ'անեն...

— Գիշերները ձեր միջից պահապաններ դրէք թէ գիւղի և թէ արտերի համար:

— Զի լինում, մեր ժողովուրդը իրար չեն պահում...

Կամաց կամաց գիւղացիք ցրուեցան: Տանտէրերս նոյնպէս հեռացան ընտանիքի բաժանմունքը (գլխատուն), որը թէև գտնուում է գոմի հետ մի ընդհանուր կտուրի տակ, բայց բոլորովին բաժանուած է նորանից: Օտարի համար նա մատչելի չէ: Օղայում մնացինք՝ ես, ձիապան Մանուկը և նօքարը: Մի կերպ տեղաւորուեցանք «սաքունների» վրայ և քնեցինք՝ մեզ յանձնելով այս տեղերում բազմաթիւ լուերին և ուրիշ միջատներին:

\*  
\* \*

Քնից ինձ զարթեցրեց թուրք ձիապանի ձայնը: Կարձ և անհանգիստ քունը մի կողմից և անսովոր գոմի հոտը միւս՝ գլուխս ծանրացրել էին: Քէջ խմելուց յետոյ, մի քանի արասի տալով տանտիրոջ, դուրս եկայ գոմից: Քիշերը ձիւն էր եկել (հոկտեմբերի 13), սաստիկ ցուրտ էր. պարզ երկնքում շողշողում էին անթիւ աստղեր: Քիւզի բնակիչները դեռ հանգիստ քնում էին. փողոցներում ոչ ոք չը կար: Ես հեծայ ձին, փաթաթուեցի եափունջիս մէջ, անցկացրի գլուխս գլխանոցը (բաշլըխը) և ճանապարհ ընկայ իմ երկու ձիապաններիս հետ Արագածով Ալէքսանդրօպօլ: Ճանապարհը անտանելի էր իւր ելեէջներով, քարերով ու փոսերով. դեռ մարդու ձեռք չէր կպել այդ կուսական տեղերին: Զիազան Մանուկը մի շատ ծոյլ, դանդաղկոտ մարդ էր. իւր ձիով, չը նայած նորա բեռի թեթևութեան (2 պուղ), միշտ յետ էր մնում, այնպէս որ այն ցրտին յաճախ կանգնում էինք և սպասում նորան: Մեզ հանդիպում էին ճանապարհին հօտեր հայ ու քուրդ հովիւներով, ուղտապաններ իրանց ուղտերով և գիւղացիներ, որոնք վերադառնում էին երևի քաղաքից (Ալէքսանդրօպօլ):

Արևը նոր էր ծագել, երբ վայր իջնելով ձիւնապատ Արագածից անցնում էինք մի նեղ կիրճով: Զորի երկու կողմից բլրաձև սարերի շղթաներ էին ձգուած, միջից մի գետ. դորա և աջ կողմի սարերի արանքում ճանապարհն էր: Այդ կիրճը, Բողաս-քեասան

